ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՏՐԱՆՍ ՀԱՅԱՍՏԱՆ»

N 7

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ

2019



ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գործունեության 4-րդ տարեդարձը:

2018 թվականի Հունվարի 25-ին տեղի ունեցավ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գործունեության 4-րդ տարեդարձը:
Արդեն 4 տարի է ինչ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն իր առջև նպատակ է դրել հասնել տրանսգենդեր անձանց և սեքս աշխատողների բարօրությանը, պաշտպանվածությանն, ու հավասարությանը՝ կատարելով իրավական փոփոխություններ՝ համագործակցելով պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների հետ:
«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության համայնքային տարածքում տրանսգենդեր համայնքի ներկայացուցիչների հետ միասին նաև ներկա էին «Ժողովրդավարության Եվրոպական Հիմնադրամի» ներկայացուցիչներ՝ Ծրագրերի ղեկավար Ալեքսանդրա Կիրբին և Դրամաշնորհների օգնական Եվգենիա Ստուպաչը:
Կազմակերպության հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը բացման խոսքում նշեց՝ «Ցավոք, Հայաստանում դեռ տրանսգենդեր անձիք ամեն օր բախվում են խտրականության, խարանի և բռնության կյանքի բոլոր ոլորտներում իրենց գենդերային ինքնության և ինքնաարտահայտման հիմքով: Հավատացած եմ, որ հեղափոխության և ժողովրդավարության ուղին ընտրած պետությունում տեղ չի կարող գտնել բռնությունը, խարանն ու խտրականությունը: Միասին մենք կարող ենք բարելավվել ժողովրդավարությունն ու տարածել հավասարությունը Հայաստանի Հանրապետությունում» Ներկա հյուրերը նույնպես կիսվեցին իրենց բարեմաղթանքներով և ջերմ խոսքերով, ասելով, որ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը շատ կարևոր դեր է խաղում Հայաստանի Հանրապետությունում ապրող տրանսգենդեր անձանց կյանքում: Արդեն չորս տարի է, ինչ կազմակերպության գործունեության շնորհիվ տրանսգենդեր անձանց կյանքը զգալիորեն բարելավվել է: Կազմակերպության համառ աշխատանքների շնորհիվ, մենք կարող ենք հեշտությամբ կատարել անվանափոխություն: Կար ու ձևի և դիմահարդարման դասընթացների շնորհիվ շատ տրանսգենդեր անձիք ձեռք են բերել հմտություններ և կարող են գտնել աշխատանք: Բոլորս պետք է պաշտպանենք մեր իրավունքները և օգնենք կազմակերպությանը կատարել էլ ավելի մեծ բարեփոխումներ Տրանսգենդեր մարդկանց համար»
«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը լինելով Հայաստանում և Հարավային Կովկասում առաջին և միակ գործող տրանսգենդեր համայնքահեն կազմակերպությունը կարևորում է տրանսգենդեր անձանց իրավական պաշտպանվածությունն ու անվտանգությունը, և նոր սկսված տարում շարունակելու է բարելավել տրամադրված ծառայությունների որակը և ավելացնել դրանց թիվը, ինչպես նաև աջակցել տրանսգենդեր անձանց լուծելու իրենց առաջ ծառացած խնդիրները:



ՀԱՐՁԱԿՈՒՄ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ի ԱՇԽԱՏԱԿՑԻ ՎՐԱ



13.02.2019
ՀՀ, ք. Երևան
2019 թ. Փետրվարի 11-ի գիշերը, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի աշխատակից, տրանսգենդեր ակտիվիստներ Վրեժ Վարժապետյանն ընկերներից մեկի հետ զբոսնելիս՝ անծանոթ երիտասարդ տղամարդու կողմից ենթարկվել է ֆիզիկական հարձակման: Վրեժը շատ հաճախ ենթարկվել է սոցիալական ցանցերում սպառնալիքների «Իրավունքի կողմի» ՀԿ աշխատակից լինելու և իր ակտիվ ներգրավմանը և ծավալած գործունեության համար: Սա առաջին անգամը չէ, երբ ՀՀ-ում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ աշխատակիցները և տրանսգենդեր անձիք ենթարկվում են հարձակման: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն 2019-ի դեկտեմբերի դրությամբ փաստագրել է տրանսգենդեր անձանց նկատմամբ գենդերային հիմքով ատելության հողի վրա հանցագործությունների 283 դեպք: Սարսափելի հարձակումն առաջացրել է բազմաթիվ վնասվածքներ և ծանր հոգեբանական շոկ: Հարկ ենք համարում նաև նշել, որ Ոստիկանության կողմից ուղղորդված բուժ. հաստատություններում Վրեժը նույնպես բախվել է ոչ ներառական մոտեցման հետ: Վրեժի առողջական վիճակը դեռ մնում է անորոշ: Բացի այդ, հարձակումից հետո, Վրեժը սոցիալական մեդիայում դարձել է սոցիալական ատելության խոսքի թիրախ, նույնիսկ ոստիկանության ներկայացուցիչների կողմից (ըստ Facebook- ի օգտատիրոջ էջում առկա տեղեկությունների):
Մինչ Հայաստանը փորձում է քայլեր ձեռնարկել ազգային օրենսդրությունը համապատասխանեցնլու միջազգային նորմերին և իրավական չափանիշներին, տրանսգենդեր մարդիկ և ակտիվիստները շարունակում են բախվել խտրականության, ոտնձգությունների և բռնության տարբեր ձևերի հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում:
«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն դատապարտում է բռնության բոլոր տեսակի դրսևորումները տրանսգենդեր անձնանց և ակտիվիստների նկատմամբ և պահանջում.
միջադեպի ամբողջական գրանցումը որպես ատելության հողի վրա հանցանք.
Միջադեպի արդար, անկողմնակալ, թափանցիկ, արագ քննություն,
Բարոյական, ֆիզիկական և հոգեբանական վնասների ամբողջական փոխհատուցում:
Զոհի դեմ ատելության խոսքի բոլոր տեսակի դրսևորումների անհապաղ դադարեցում:

Ուրախ ենք ձեզ տեղեկացնել, որ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը **ViiV Healthcare**ֆինանսավորմամբ «ՍՃՓՎ/ՄԻԱՎ/ՁԻԱՀ կանխարգելումը տրանս անձանց շրջանում, համայնքային կրթության, հանրային իրազեկման և շահերի պաշտպանության միջոցով Հայաստանում» ծրագրի շրջանակներում այսուհետ Տրանսգենդեր և ՏՍՏ համայնքի ներկայացուցիչներին անվճար տրամադրում է պահպանակներ, լուբրիկանտներ, կրթատեղեկատվական նյութեր, ինչպես նաև ուղղորդում է դեպի «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտությունների:

Մեզ հետ կապ կարող եք հաստատել՝

էլ. հասցե - **health.rightsidengo@gmail.com**

Հեռ. **+37411880770**

Ֆեյսբուք – **Right Side NGO**

ՀՈՒՆՎԱՐ- ՓԵՏՐՎԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԹԻՎ

"ԿԵՆԴԱՆԻ ԳԻՐՔ" ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ **14**

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ **2**

ԻՐԱՎԱԿԱՆ ԽՈՐՀԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ **5**

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ **6**



ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎ

73

2019 Թ.

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ

ԲՈԼՈՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ

+374 11 880 770

www.rightsidengo.com

rightsidengo@gmail.com

@RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ